

# Ն Ա Ի Ա Ս Ա Ր Ռ Պ ԱԶԳԻԱԿ

ՄԱՐԶԱԿԱՆ ՅԱԻԵԼՈՒԱԾ

Ա. ՏԱՐԻ

ԹԻ 3

ՇՈՎՏԵՄԲԵՐ 2002

## ԱՂԲԱԼԵԱՆ-Հ.Մ.Ը.Մ. ՀԱՄԱԼԻՐԻ ԲԱՅՈՒՄԸ ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱԽԵՐՄԵՐ ԽՈՒՄԲԵՐՈՒՆ

Շաբաթ, 28 Սեպտեմբերին, մեծ շուքով կատարուեցաւ Աղբալեան-Հ.Մ.Ը.Մ. մարզամշակութային համալիրի բացումը, Մըվհէրի մէջ:

Սերունդներ ամբողջ Լիբանանի մէջ երապած են այսպիսի կատարեալ ու արդիական կեդրոն մը ունենալ: Անվերջանալի ժողովներու ընթացքին յաճախ արծարծուած է այս նիւթը, մեր մամուլը ահագին մէլան հոսեցուցած է այս մասին, կրկնելով միեւնոյն յանկերգը. արդիական կեդրոնը, դաշտը անհրաժեշտ է:

Այդ բոլորը հիմա այլեւս կը պատկանին անցեալին: Կեդրոնը կայ, եւ ի՛նչ կեդրոն: Առանց դաշտի, առանց կեդրոնի, փոշոտ ու ցեխոտ դաշտերու մէջ Հ.Մ.Ը.Մ. բոլոր մարպերուն մէջ գտնուեցաւ առաջին դիրքերու վրայ: Արձանագրեց փայլուն ու անկրկնելի արդիւնքներ:

Այսօր ունինք լաւագոյն կեդրոններէն մէկը, յարմարագոյն բոլոր տրեւելներով օժտուած: Այս մէկը Հ.Մ.Ը.Մ.ի մարպիկները, խումբերը եւ անոնց պատասխանատուները կը դնէ նոր մարտահրաւերի մը դիմաց: Հիմա կայ դաշտը, չկայ անոր չգոյութեան պատճառաբանութիւնը:

Լիբանանահայութիւնը Հ.Մ.Ը.Մ.էն արդարօրէն կը սպասէ փայլուն արդիւնքներ: Ի տես այս հրաշալի կեդրոնին, ոչ մէկ պատրուակ ընդունելի է այսուհետեւ: Կը սպասենք անյապաղ արդիւնքի: Այսպէս անհմատ է քարեղէն կառոյցը, որքան ալ որ գեղեցիկ ու հրապուրիչ ըլլայ անիկա:

Ձեռնոցը նետուած է Հ.Մ.Ը.Մ.ին: Հ.Մ.Ը.Մ.ի վայել կեցուածքով, գիտակցութեան ու արժանապատուութեան բարձր կորովով, հայու աննկուն կամքով վերցնենք այդ ձեռնոցը եւ լիբանանահայութեան շնորհէնք հպարտութիւն առթող պահեր, անցեալի քաղցր յիշատակները վերապարծող այնքան սիրելի ու կարօտալի պահեր:



## Հ.Մ.Ը.Մ. ԱՆԳԱՄ ՄԸ ԵՒՍ ՓԱՍՏԵՑ, ՈՐ ԿԸ ՄՆԱՅ ՓԻՆԿ - ՓՈՆԿԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՀՍԿԱՆ

Փինկ - փոնկի Լիբանանի բոլոր ժամանակներու հսկան կը հանդիսանայ Հ.Մ.Ը.Մ.-ը, իր երկսեռ խումբերով: Ո՛վ կրնայ հակառակը պնդել: Արդիւնքները իրենք թող խօսին:

Այսպէս եղած է երկա՛ր տարիներ: Պօղոս Յովհաննէսեան, Բաֆֆի Մուշղոյեան, Նազիկ Յովհաննէսեան, ինչպէ՛ս վերջակէտ դնել: Անոնք ոչ միայն ախոյեան հանդիսացած են, այլեւ տարիներով մենատիրութիւն հաստատած են, առանց զիջելու իրենց դիրքերէն:

Աւելի ուշ եկան նորերը, նոյն ոգիով, նոյն առաքելութեամբ: Եւ, ահաւասիկ, այսօր ալ կը շարունակուի աւանդութիւնը:

Անցեալ շաբաթ, «Միշէլ Մըր»ի անուան համալիրին մէջ (Նահր էլ Մոթ) տեղի ունեցան փինկ - փոնկի Լիբանանի ախոյեանութեան մրցումները: Թէ՛ տղոց, թէ՛ աղջկանց պարագային, Հ.Մ.Ը.Մ. անգամ մը եւս փաստեց, որ կը մնայ թաւազոյնը, հզօրագոյնը:

Այսպէս, Լիբանանի փինկ - փոնկի աղջկանց ախոյեան հանդիսացաւ Լիզա Պարիկեան, աւարտականին մարաթոն մրցումներէ ետք պարտութեան մատնելով Հ.Մ.Ը.Մ.ական Լարա Քէչէպաշեանը: Զոյգ աղջկանց մրցումներուն, Պարիկեան - Քէչէպաշեան զոյգը շահեցաւ ախոյեանութեան տիտղոսը:

21 տարեկանէն վար տղոց ախոյեանութեան բաժակը բարձրացուց Հ.Մ.Ը.Մ.ական Ալֆրէտ Նաժըմ - Սարգիսեան, որ չբաւարարուեցաւ այս իրազործումով եւ շահեցաւ նաեւ Լիբանանի տղոց ախոյեանութիւնը:



ملحق أرقام

# ԱՍԻԱԿԱՆ 14ՐԴ ԽԱՂԵՐԸ «ՎԵՐԱՄԻԱՑՈՒՄ»Ի ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

Ամբողջ երկու շաբաթ, միջազգային մամուլը իր լուսարձակները պիտի կեդրոնացնէ Հարաւային Քորէայի Փոլսան քաղաքին վրայ, որ կը հիւրընկալէ տարուան մարզական մեծագոյն իրադարձութիւններէն մէկը՝ 14րդ Ասիական խաղերը:

Մրցումներու հանդիսաւոր բացման արարողութիւնը տեղի ունեցաւ անցեալ կիրակի, 29 Սեպտեմբերին, եւ մրցումներու մեկնարկէն առաջ իսկ մրցանիշներ հաստատուեցան, եւ խաղերը մուտք գործեցին մարզական պատմութեան լայն դռներէն ներս:

Այս խաղերուն 44 երկիրներէ ժամանած (մրցանիշ մը) 9900 մարզիկներ պիտի մրցին 38 տարբեր մարզաձեւերու մէջ՝ 419 ոսկի մետալներու համար: Այս մարզաձեւերուն կարգին են ողիմպիական գրեթէ բոլոր խաղերը, ինչպէս նաեւ՝ Ասիայէն դուրս նուազ ծանօթ խաղեր, ինչպէս՝ «Վու. շու», «Քապպատի» եւ «Սեփաք քաքրաու»:

Յուսալով, որ խաղերը կրնան շրջանցել ամբողջ տարիներ Պաղատերազմին կանգնեցուցած խոչընդոտները, հիւրընկալ Հարաւային Քորէա մրցումները արդարացիօրէն կը կոչէ «Վերամիացումի խաղեր», որովհետեւ տարիներու «պոյքոք»է ետք Հիւսիսային Քորէա առաջին անգամ ըլլալով կը մասնակցի Հարաւային Քորէայի մէջ տեղի ունեցող մարզական իրադարձութեան մը: Հիւսիսային Քորէա այս խաղերուն մասնակցելու համար ուղարկած է 312 մարզիկներ եւ պատասխանատուներ, ինչ-



պէս նաեւ՝ 360 քաջալերողներ:

Խաղերու բացումին երկու Քորէաներու մարզիկները միասնաբար մէկ դրօշի տակ եւ ձեռք-ձեռքի տողանցեցին եւ պահ մը Հիւսիս եւ Հարաւ գոյութիւն չունեցան, այլ միայն՝ Քորէա:

Բացումը պատմական պահ մըն էր նաեւ Աֆղանիստանի պատուիրակութեան համար, որ 1994էն ի վեր առաջին անգամ ըլլալով միջազգային մարզական մրցումներու կը մասնակցէր: Յիշատակելի է նաեւ նորակազմ Թիմոր պետութեան ներկայութիւնը:

Բացման արարողութեան Պաղեստինի պատուիրակութիւնը Արաֆաթի նկարը բարձրացուցած էր՝ իբրեւ բողոք իսրայէլեան ուժերու կողմէ պաղեստինցի ղեկավարի կեդրոնատեղիի վրայ շրջափակումին:

Լիբանան նոյնպէս ներկայ էր տողանցող երկիրներու շարքին եւ ֆութպոլի, աթլէթի եւ «Վու. շու»ի մարզիկները իրենց կարելին պիտի ընեն բարձր պահելու համար մայրիներու երկրին անունը:

## ՄԵՏԱԼՆԵՐՈՒ ԱՆՁՈՒԳԱԿԱՆ ՀՆՁՈՂԸ ԶԻՆԱՍՏԱՆ

Ասիական խաղերուն փառքը անվիճելիօրէն կը պատկանի Չինաստանի, որ 1982էն իր վեր միշտ ալ գրաւած է մետալներու ընդհա-

նուր դասաւորման պարագլուխի դիրքը, տիրանալով, միջին հաշուով, մետալներուն 35 տոկոսին:

4 տարի առաջ Պանքոքի մէջ տեղի ունեցած խաղերուն Չինաստան տիրացած էր 129 ոսկի մետալի, մինչ 2րդ դիրքը գրաւող Հարաւային Քորէա ունէր միայն... 65 ոսկի մետալներ:

Նշենք, որ Չինաստանի գերակայութիւնը մարզական աշխարհին մէջ համեմատաբար նոր է: Երբ 1949ին համայնավար ղեկավար Մաու Յէթունկ ծրագրեց վերաշխուժացնել մարզական կեանքը, Չինաստան իր պատմութեան մէջ միայն ողիմպիական մէկ մետալի տիրացած էր (1936ին): Անցնող տասնամեակին Չինաստանի պետութիւնը միլիոնաւոր տոլարներ ծախսեց մարզական դպրոցներու մէջ ախոյեաններ պատրաստելու համար, եւ արդէն այսօր Չինաստան տիրական ներկայութիւն է գրեթէ բոլոր մարզաձեւերուն մէջ՝ ասիական թէ միջազգային առումով:



# ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԵԾ ԹԷ ՓՈՔԻ ԲՈՒՆՈՐ ԱԿՈՒՄՔՆԵՐԸ ԿԸ ԴԻՄԱԳՐԱԻԵՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԺՈՒՍՐ ԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Եւրոպական Ֆուտպոլի եղանակի բացումէն կարճ ժամանակ ետք, ակումբներու ներկայացուցիչներ ժողով մը գումարեցին Լոնտոնի մէջ, որուն միակ օրակարգը ակումբներու տնտեսական դժուար վիճակն էր:

Եւրոպական բոլոր մեծ ակումբներն ալ նիւթական նեղ կացութեան մէջ կը գտնուէին եղանակի նախօրեակին, իսկ այդ տագնապը իր գագաթնակէտին հասաւ Իտալիոյ մէջ, երբ աւելի համեստ խումբեր որոշեցին պոյքոթի ենթարկել Քալչիոյի մրցաշարքը, եթէ պատկերասփիւռի կայաններ իրենց խոստացած գումարը չբարձրացնեն:

Առ այդ, աւելի «հարուստ» ակումբներ իրենց շահաբաժինէն «նպաստ»ներ խոստացան «աղքատ» ակումբներուն, որ կարելի ըլլայ Քալչիոն սկսելու:

Եղանակի բացումէն առաջ, Ֆիորենթինա արդէն սնանկութիւն յայտարարած էր եւ ակումբը վերջնականապէս փակուած էր:

Յունաստանի Ֆուտպոլի ֆետերասիոնը, իր կարգին, յայտնեց, թէ յունական հսկայ ակումբ մը (առանց անունը նշելու) փակուելու վտանգին տակ կը գտնուի ծանր պարտքերու պատճառով:

Նոյնն է պարագան Անգլիոյ մէջ, ուր բարձրագոյն Լիկայի ակումբներ չկրցան համաձայնութիւն գոյացնել պատկերասփիւռի «Ա.Յ. Վ.Ի.» կայանին հետ:

Սկովտիոյ Ֆուտպոլին մասին տեղեկագիր մը կը յայտնէ, թէ 2000-2001 եղանակին, Ա. դասակարգի 12 խումբերուն միացեալ պարտքը կը գնահատուի 205 միլիոն տոլարով:

Թուրքիոյ մէջ, Կալաթասարայ խումբին պարտքը հասած է 33 միլիոն տոլարի:

Տնտեսական տագնապը այնքան սրած է, որ կարգ մը ականաւոր մարզիկներ, ինչպէս՝ Ջինետին Ջիտան (Ռէալ Մատրիտ), Քրիսթիան Վիերի եւ Ալվարո Ռեքոպա (Ինթէր Միլան), ինչպէս նաեւ ուրիշներ, պատրաստակամութիւն յայտնած են կրճատելու իրենց ամսականները... եթէ այդ մէկը կը նպաստէ իրենց ակումբներուն տնտեսութեան բարելաման:

Լոնտոնի մէջ կայացող ժողովը քննարկեց Ֆուտպոլի մարզիկներուն բարձր ամսականները, պատկերասփիւռի կայաններուն հետ համաձայնութիւնները եւ նոր շուկաներու որոնումը:

Յստակ է, որ մանաւանդ վերջին 10 տարիներուն, եւրոպական Ֆուտ-



պոլի «ճարտարարուեստը» շատ արագ յառաջդիմեց:

Օրինակ, տնտեսական նեղ կացութեան մատնուած Ռէալ Մատրիտ «գնեց» Լուիս Ֆիկոն 56 միլիոն տոլարի եւ Ջինետտին Ջիտանը՝ 60 միլիոն տոլարի, իսկ Ռոպէրթո Քարլոսի «գինը» ճշգրտ է 100 միլիոն տոլար: Լման կազմով դաշտ ներկայանալու պարագային, Ռէալ Մատրիտի մարզիկներուն «դրամագլուխը» դաշտին վրայ կը հասնի 1 միլիառ տոլարի...

## ԱՍԻԱԿԱՆ 14ՐԴ...


Շարունակուած՝ 2րդ էջէն

Ընդհանուր դասաւորման երկրորդ դիրքին համար պիտի պայքարին Ճափոն եւ Հարաւային Քորէա: Այս վերջինը, դառնալէ ետք առջին ասիական երկիրը, որ կը հասնի Մոնտիալի կիսաւարտական հանգրուան, պիտի փորձէ տիրանալ նաեւ Ֆուտպոլի խաղերու ոսկի մետալին: Հարաւային Քորէա այս տիտղոսին գլխաւոր թեկնածուն է, հակառակ այն իրողութեան, որ տարիքային սահմանափակումի պատճառով Քորէայի Մոնտիալի կազմէն միայն 4 աստղեր ընդգրկուած են հիւրընկալ երկիրը ներկայացընող կազմին մէջ: Ֆուտպոլի խաղերուն Հարաւային Քորէայի գլխաւոր մրցակիցը պիտի ըլլայ Հիւսիսային Քորէան, տրուած ըլլալով, որ Ճափոն եւ Ջինաստան ուղարկած են երիտասարդական կազմեր, իսկ Սէուտական Արաբիա բացակայ է:

Ֆուտպոլի մրցումներուն Լիբանանի խմբակը (Ե. խմբակ) կ'ընդգրկէ նաեւ Աֆղանիստանը, Քաթարը եւ Իրանը: Այս

վերջինը պիտի փորձէ շրջանցել Մոնտիալի գտումներուն արձանագրած իր ճախողութիւնը: Նշենք, որ Լիբանանի կազմին մէջ ընդգրկուած է նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Ֆուտպոլիստներէն Յակոբ Տօնապետեան:

Խաղերուն ընթացքին հետեւելու համար կարելի է այցելել կազմակերպիչ յանձնախումբին պաշտօնական կայքը՝ [www.panasiad.org](http://www.panasiad.org):



# ԱՄԲՈՂՁՈՎԻՆ ԱՐՀԵՍՏԱՎԱՐԺ ԴԱՐՁԱԾ ՀՁՕՐ ԽՈՒՄԲԵՐՈՒ ԴԻՄԱՅ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԸ ՄՆԱՅ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՅՈՂՈՒԹԵԱՄԲ ԱՆՇԱՀԱԽՆԴԻՐ ԻՐ ԱՒԱՆԴԸ

## Կ'ԸՍԷ ԱԹԼԵԹՈՒՉՄԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ՓՈԽ ՆԱԽԱԳԱՀ ԵՂԲ. ՎԱՐՈՒԺԱՆ ԳԷՈՐԳԵԱՆ

«Ազդակ»ի մարզական յաւելուածի՝ «Նաւասարդ»ի այս թիւին հարցազրոյցը տրամադրուած է ար-  
լեթիզմին, որուն մէջ Հ.Մ.Ը.Մ. միշտ ալ տիրական ներկայութիւն եղած է թէ՛ լիբանանեացի, թէ՛ արա-  
բական առումով: Առ այդ, հարցազրոյցի մեր հիւրն է Լիբանանի արլեթիզմի ֆետերասիոնի փոխ  
նախագահ եղբ. Վարուժան Գէորգեան, որ միաժամանակ երկար տարիներու մեծ վաստակ ունեցած  
է Հ.Մ.Ը.Մ.ի արլեթիզմի խումբերուն արձանագրած յաջողութիւններուն մէջ իբրեւ մարզիչ, պատաս-  
խանատու եւ նախապէս նաեւ իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ական մարզիչ:



«ԱԶԴԱԿ».- Այսօր ի՞նչ վիճակ կը պարզէ արլեթիզմը Լիբանանի  
մէջ:

Վ. Գ. ԳԷՈՐԳԵԱՆ.- Շատ հաւանաբար արլեթիզմը բոլոր ժամանակներէն  
աւելի ա՛յսօր կ'ապրի իր լաւագոյն օրերը այս երկրին մէջ, պարզ այն պատ-  
ճառով, որ խումբերը արդէն իսկ դարձած են զուտ արհեստավարժ, ապա  
նաեւ որովհետեւ լիբանանեան պետութիւնը բաւական լաւ աշխատանք կը  
տանի այս մարզին բարգաւաճման համար:

«Ա».- Կարելի՞ է մանրամասնել:

Վ. Գ.- Այո՛: Նախ ըսեմ, որ մարմնակրթութեան նախարարութիւնը,  
յանձին նախարար Սեպուհ Յովնանեանի, Լիբանանի պատմութեան մէջ  
առաջին անգամ ըլլալով նիւթական լայն յատկացում կատարեց Ֆետե-  
րասիոնին՝ 78 միլիոն լ. ո.: Առաւել, նախարարութիւնը մօտէն կը հետեւի  
մեր բոլոր աշխատանքներուն եւ ամէն անգամ որ արտասահմանի մէջ Լի-  
բանանը ներկայացնելու հրաւէր կայ, ան չի զլանար իր օժանդակութիւնը,  
որուն շնորհիւ բոլոր մրցաշարքերուն կը մասնակցինք եւ ամէն կողմ լի-  
բանանցի մարզիկներ կը մեկնին: Ասիկա առնուազն փորձառութեան  
իմաստով մեծ շահ է, անշուշտ նաեւ քարոզչական իմաստով՝ հոյակապ  
երեւոյթ:

Ասոր կողքին, յայտնեմ նաեւ, որ Լիբանանի Ողիմպիական կոմիտէն  
եւս ամէն ձեւով կ'օժանդակէ մեզի, Ֆետերասիոնին, ինչ որ մեծ խթան է  
անշուշտ: Օրինակ, Լիբանանի վեց  
լաւագոյն արթիթները արտասահման  
(Եւրոպա) ուղարկուած են՝ բարելա-  
ւելու իրենց ֆորմասիոնը եւ վերա-  
դարձին՝ պատիւ բերելու երկրին:

«Ա».- Կրնա՞ք ըսել, որ արաբ-  
կան աշխարհին մէջ Լիբանան ար-  
թիթներու ներկայութիւնն է:

Վ. Գ.- Ո՛չ, բայց այդ մակարդա-  
կին ձգտումը կայ անպայմանօրէն:  
Պէտք է ըսել, որ արաբական աշխար-  
հին մէջ արթիթիզմը յարափոփոխ վի-  
ճակներ կ'ապրի, շատ արագ մեծ  
նուաճումներ կ'արձանագրէ եւ ներ-  
կայ է միջազգային մրցաշարքերու:  
Այս բոլորը կ'ըլլան անշուշտ հետեւո-  
ղական աշխատանքի ու մասնաւոր  
հսկայական նիւթական ներդրումնե-  
րու շնորհիւ: Լիբանան տակաւին  
այդ մակարդակին հասած չէ թէեւ,  
սակայն վստահ եմ, որ ներկայ թա-  
փով՝ քանի մը տարիէն կարելի կ'ըլ-  
լայ նուաճել այդ մակարդակը:

«Ա».- Լիբանանի մէջ ներկայիս  
ո՞ր խումբերն են ամէնէն զօրաւոր:

ները:

Վ. Գ.- Անթունիէ Պապատա, Շանվիլ,  
Անսար, Բանակ, Ժամհուր: Աղջկանց  
պարագային՝ Շանվիլ լաւագոյնը, իսկ  
տղոց՝ Բանակի խումբը:

«Ա».- Գտնե՞՞ք ո՛:

Վ. Գ.- Նախ որովհետեւ նշեալ բոլոր խումբերն ալ արհեստավարժ են,  
մեծ գումարներ կը ծախսեն, ունին արհեստավարժ լաւ մարզիչներ, յաճախ  
օտար, իսկ իւրաքանչիւր մարզի համար՝ մարզիչի օգնականներ:

«Ա».- Օգոստոսին կայացաւ Լիբանանի խմբային ախոյեանութեան  
բաց մրցաշարքը: Ուշագրաւ էր Հ.Մ.Ը.Մ.ի բացակայութիւնը փոտիում-  
ներու վրայ: Ոչ մէկ առաջնութիւն, մինչդեռ նախագէտ Հ.Մ.Ը.Մ. միշտ  
ներկայ էր մեծերու շարքին: Ի՞նչ է պատճառը. մանաւորը որ մեր նա-  
խորդ հարցումին երբ պատասխանեցիք. մեծերու շարքին չնշեցիք  
Հ.Մ.Ը.Մ.ը:

Վ. Գ.- Հ.Մ.Ը.Մ.ը չնշեցի, որովհետեւ արդէն իսկ ձեր հարցումով կ'ընէք  
ճիշդ հաստատումը: Իսկ ինչ կը վերաբերի պատճառին կամ պատճառնե-  
րուն մասին, ապա այդ մէկը հարց տուէք արթիթիզմի Հ.Մ.Ը.Մ.ի ներկա-  
յացուցիչներուն, որովհետեւ իբրեւ Ֆետերասիոնի փոխ նախագահ, ճիշդ  
չէ որ արտայայտուիմ նման պարագանե-  
րու:

«Ա».- Վերջին հարցում. ի՞նչ ունիք  
ըսելիք իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ական: Կարելի՞ է  
բայ պոստի վերջ յիշուած խումբերուն  
նեա: Եթէ այո՛, ի՞նչպէս:

Վ. Գ.- Այո՛, կարելի է քայլ պահել եւ  
պէ՛տք է քայլ պահել: Առաջին հերթին՝ մէկ  
պայմանով. ամբողջովին արհեստավարժ  
դարձած հզօր խումբերու դիմաց մեզի կը  
մնայ շարունակել միութենական հասկացո-  
ղութեամբ անհասարակ դիրք մեր աւանդը:  
Եթէ կայ Հ.Մ.Ը.Մ.ականի համոզումը, կամ-  
քը, միութենական կարգապահութիւնը, կա-  
րելի է պայքարիլ հսկայական գումարներու  
դէմ, այլապէս դուրս կը մնանք պայքարէն:  
Հետեւաբար պէտք է ամէն գնով վերադառ-  
նալ Հ.Մ.Ը.Մ.ի աւանդին, ինչպէս նաեւ ու-  
նենալ արթիթիզմի լաւ դպրոց մը՝ որակաւոր  
մարզիչներով: Զմոռնանք նաեւ հայկական  
վարժարանները: Անոնք եւս լաւ մարզիչնե-  
րով կրնան նոր սերունդ հասցնել եւ զանոնք  
վստահիլ Հ.Մ.Ը.Մ.ին: Ի վերջոյ մեր դպրոց-  
ները եղած են մեր առաջին «հնոց»ները այդ  
իմաստով, հայապահպանման ու հայակեր-  
տումին կողքին:



# ԼՈՒՐԵՐ ՀԱՅՐԵՆԻ ՄԱՐԶԱՇԽԱՐՀԷՆ

## ՀՐԱՉԵԱՅ ԽԱՉԱՏՐԵԱՆ՝ ՔԱՐԱԹԵԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅԵԱՆ

Սեպտեմբերին Մոսկուայի մէջ վերջ գտան Քարաթէի Վաթոքա («համերաշխութեան ուղի») ոճի աշխարհի խմբային ախոյեանութիւնները. ուսասանայ Հրաչեայ Խաչատրեան Ռուսիոյ հաւաքականին հետ հանդիսացաւ ախոյեան: Ռուսիա աւարտական մրցումին 6:1, 6:1, 8:0 արդիւնքով պարտութեան մատնեց Ճափոնը:

## ԾԱՆՐԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ. ԵՒՐՈՊԱՅԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՐԵՆԻ ՄԵՏԱԼԱԿԻՐՆԵՐ

Սոչիի մէջ կայացած ծանրաբարձութեան Եւրոպայի ախոյեանութեան, Հայաստանը կը ներկայացնէին 3 մարզիկներ, որոնցմէ երկուքը վերադարձան մետալներով: Այսպէս, 100 քիլոկրամ կշիռի դասակարգին մէջ առաջէ եւ եփովէ ժրթէ մրցումներուն ընդհանուր 795 քիլոկրամ բարձրացուցած էտմոն Պեռնեցեան արծառնացաւ պրոնզ մետալին. ան նաեւ տիրացաւ առաջի արծաթ մետալին: Միւս կողմէ, 110 քիլոկրամ դասակարգին մէջ, առաջի, եփովէ ժրթի եւ ընդհանուրի պրոնզէ մետալներուն տիրացաւ Սամսոն Աւագեան:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻՍՏՆԵՐԸ ԵՒՐՈՊԱՅԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ՄՐՅԱՇԱՐՔԻՆ

Իսլանտայի մէջ տեղի ունեցող մինչեւ 17 տարեկաններու Եւրոպայի ֆուտպոլի ախոյեանութեան զտումի մրցումներուն, Հայաստանի կրտսերները 2 - 1 արդիւնքով պարտութիւն մը կրեցին Չուիցերիայէն եւ 3 - 2 արդիւնքով՝ Իսրայէլէն, իսկ Իսլանտայի կազմին հետ ճակատումը վերջ գտաւ 1 - 1 արդիւնքով: Այսպիսով, Հայաստան դուրս մնաց զտումներու մրցումներէն: Հայաստանի ֆուտպոլի ֆետերասիոնի նախագահ Ռուբէն Հայրապետեան այս մասին ըսաւ. «Պարտութիւնը, ըլլայ ան սուր մրցակցութենէ ետք թէ ոչ, կը մնայ պարտութիւն. Իսլանտայի մէջ հայ պատանի



Ֆուտպոլիստներու արդիւնքները հիասթափեցուցին զիս. ուղղակի տապալում էր, որուն պատճառները պիտի քննարկուին»:

Հոկտեմբեր 12- 16 տեղի պիտի ունենան 19 տարեկանէն վար տարիքային դասակարգի Եւրոպայի ֆուտպոլի ախոյեանութեան զտումի մրցումները: Այս ծիրէն ներս, Հայաստանի հաւաքականը պիտի մրցի Իտալիոյ, Սլովաքիոյ եւ Լատվիոյ կազմերուն դէմ:

## ՆԱԶԱՐԵԱՆ ԵՒ ԱՔՐԱՀԱՄԵԱՆ՝ ԸՄԲԸԱՄԱՐՏԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅԵԱՆՆԵՐ

Սեպտեմբեր 22ին Մոսկուայի մէջ վերջ գտան յունահունական ըմբշամարտի աշխարհի ախոյեանութեան մրցումները: Թէեւ Հայաստանը ներկայացնող հինգ մարզիկներէն միայն երկուքը արձանագրեցին գոհացուցիչ արդիւնքներ՝ հասնելով կիսաւարտականին, սակայն Պուլկարիան ներկայացնող Արմէն Նազարեան եւ Շուէտը ներկայացնող Արա Աբրահամեան համդիսացան իրենց դասակարգերուն աշխարհի ախոյեաններ: Այսպէս, 60 քիլոկրամի աւարտական մրցումին, Նազարեան 3 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց լեհ Ջավատովսկին, իսկ 84 քիլոկրամի աւարտականին, Աբրահամեան 3 - 1 արդիւնքով տապալեց ռուս Մենչիքովը:

Իսկ Թեհրանի մէջ տեղի ունեցող ազատ ըմբշամարտի աշխարհի ախոյեանութեան հայրենի ըմբիչ Արամ Մարգարեան հանդիսացաւ 60 քկ. կշիռքային դասակարգի աշխարհի փոխ ախոյեան:

## ՀԱՅԱՍՏԱՆ «ԵՒՐՈ-2004»Ի ՉՏՈՒՄՆԵՐՈՒՆ ՍԿՍԱԻ ԼԱԻ ԶԵՒՈՎ

7 Սեպտեմբերին, Երեւանի Հանրապետական մարզադաշտին մէջ Հայաստանի հաւաքականը կատարեց «Եւրո 2004»ի զտումներու ծիրէն ներս իր առաջին մրցումը՝ Ուքրանիոյ կազմին դէմ: Առաջին 70 վայրկեաններուն 2 - 0 ետ մնալէ ետք, Հայաստանի ֆուտպոլիստները նշանակեցին 2 կոլեր եւ հաւասարութիւն մը խլեցին Ուքրանիայի կազմէն, որ կը նկատուի Զ. Խմբակի պարագլուխի դիրքին համար մրցող խումբը: Նոյն խմբակին մէջ, Սպանիա 2 - 0 արդիւնքով տապալեց Յունաստանը:

Հայաստան իր յաջորդ մրցումը պիտի կատարէ 16 Հոկտեմբերին, Յունաստանի դէմ:


**LORY'S ART**  
**Brass Factory**  
*A Golden Art From Lebanon*

*Anjar*

Awards - Signs - Plaques  
 Medals - Pins - Badges

Owner Souren Janbazian  
 Anjar - Bekaa, Tel.: 08/620799  
 Fax: 08/620789 - Cell.: 03/220085  
 e-mail: lorysart@terra.net.lb

# ԶՈՒՏ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԱՐԶԱԶԵԻՐ՝ ՊԱՍՔԵԹՊՈՒԼԸ



Պասքեթպոլը նաեւ այն քիչ մարզախաղերէն մէկն է, որուն ծագումը թուականն ու «հնարողը», յստակ է եւ ճշգրիտ:


## ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐ

1891 թուականի Դեկտեմբերին Միացեալ Նահանգներու Մէսէչուսէց նահանգի Սփրինկֆիլտ շրջանին մէջ, «Ուայ-էմ.Սի.էյ.»-էն ներս (Քրիստոնեայ Երիտասարդաց Միութիւն) մարզանքի եւ ֆիզիքական կրթութեան ուսուցիչի պաշտօն վարող տոքթ. Ճէյմս էյ. Նէյսմիթ ներկայացուց պասքեթպոլը:

Ձմեռ էր եւ անոր աշակերտները կարիքը ունէին արագ մարզախաղի մը, որ գոց դաշտի մը վրայ խաղցուէր: Հետեւաբար Նէյսմիթ 13 գլխաւոր օրէնքներ հրապարակեց եւ պատշգամներէն երկու դեղձի կողովներ կախելով՝ «մարմնաւորեց» պասքեթպոլը: Առաջին անգամ գործածուած այս դեղձի կողովներէն է, որ այս խաղը ստացաւ իր անունը:

Այսպէս, տեղի ունեցաւ պասքեթպոլի առաջին մրցումը, որուն ընթացքին երկար փորձերէ ետք, Ուիլիամ Ռ. Չէյս յաջողեցաւ գնդակը մտցնել կողովներուն մէջ եւ նշանակել մրցումին միակ կողմը: Առաջին այս մրցումէն ետք նոր մարզախաղը սկսաւ մեծ հռչակ շահիլ եւ բազմաթիւ միութիւններու պահանջին ընդառաջելով՝ խաղին օրէնքները առաջին անգամ ըլլալով լոյս տեսան Ուայ. էմ. Սի. էյ.-ի թերթին՝ «Թրայքեկկլ»-ին մէջ, 15 Յունուար 1892ին:

Նէյսմիթի օրէնքները, սակայն, հետագային կարգ մը փոփոխութիւններ պիտի կրէին: Արդարեւ, երբ Նէյսմիթ պասքեթպոլը հնարեց, այս մարզաձեւը կը խաղցուէր դեղձի կողովներով եւ ֆուլթպոլի գնդակներով, ինչ որ դժուարութիւններ կը ստեղծէր, որովհետեւ իւրաքանչիւր անգամ որ կէտ մը նշանակուէր, աստիճաններ կը զետեղուէին վեր «մագլցելու» եւ գնդակին վերատիրանալու համար, եւ այդ մէկը պատճառ կը դառնար, որ մրցումը քանի մը առիթներով ընդհատուէր: Հետագային, սակայն, այս դժուարութիւններէն ձերբազատելու նպատակով ստեղծուեցան պարաներէ հիւսուած կողովներ եւ աւելի մեծ գնդակներ: Այսպէս, նոր գնդակը դիւրութեամբ կը սահէր «ծակ» կողովէն դուրս եւ մրցումը կը շարունակուէր: Նոյնպէս ալ, սկզբնական շրջանին մարզիկներուն թիւը կը հասնէր իննի (իւրաքանչիւր խումբ), իսկ եթէ այս վերջիններուն նետած գնդակները կողովէն վրիպէին, համակիրները իրաւունք կ'ունենային անոր ուղղութիւնը փոխելու ի նպաստ իրենց քաջալերած խումբին, հետեւաբար այս բոլոր բարդութիւններէն խուսափելու համար 1896ին վաւերացուեցաւ կողովներուն ետեւ քառանկիւն տախտակներ զետեղելու օրէնքը, եւ իւրաքանչիւր խումբի մարզիկներուն ընդունուած թիւը նուազեցաւ հինգի: Ինչ կը վերաբերի ներկայի օրէնքներուն, ապա անոնք գրեթէ անփոփոխ մնացած են 1930ական թուականներէն ի վեր:



Օլանուսի

## ԴԷՊԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՅՈՒՄ

Վերադառնալով պասքեթպոլի ծնունդի շրջանին՝ նշենք, որ Մ. Նահանգներէն դուրս անոր թափանցումը սկսած է բաւական կանուխ, եւ նկատի ունենալով, որ Նէյսմիթի առաջին հինգ մարզիկները եղած են քանատացիներ, բնականաբար ուրեմն Քանատան եղած է Մ. Նահանգներէն դուրս առաջին երկիրը, ուր կիրարկուած է պասքեթպոլը: Աւելի ուշ, 1893ին այս խաղը մուտք գործած է Ֆրանսա եւ յաջորդ տարին ալ՝ Լոնտոն, իսկ 1900ին պասքեթպոլը արդէն իսկ հասած է Աւստրալիա, Չինաստան, Հնդկաստան եւ Ճափոն:

Այս նոյն շրջանին պասքեթպոլը սկսաւ մուտք գործել տարբեր նահանգներու համալսարաններէն ներս: Այսպէս, 1892ին Ճոնս Կոլեջի, Այոուա Յի. Եւ Շիքագոյի համալսարաններուն ֆիզիքական կրթութեան ուսուցիչները ուղղակի կապի մէջ մտնելով Նէյսմիթի հետ՝ պասքեթպոլը ներկայացուցին իրենց ուսանողներուն: 18 Յունուար 1896ին Այոուա Յի. մէջ տեղի ունեցաւ համալսարաններու միջեւ առաջին մրցումը, որ վերջ գտաւ ի նպաստ Շիքագոյի ուսանողներուն (15-12) եւ այսպիսով թափ առաւ համալսարանական պասքեթպոլը:

Միւս կողմէ, 1895ին Քլարա Պաէր Նէյսմիթի հաստատած օրէնքներուն մէջ որոշ փոփոխութիւններ մտցնելով՝ պասքեթպոլի դուրս բացաւ աղջիկներուն առջեւ ալ: Անոր օրէնքներուն համաձայն, իւրաքանչիւր խումբ կ'ունենար 6 մարզիկ եւ դաշտը կը բաժնուէր 2 գլխաւոր բաժիններու, որոնցմէ իւրաքանչիւրին մէջ կը մնային երեք մարզիկներ: Անոր օրէնքները գործադրուեցան մինչեւ 1971: Այս թուականին, նոր օրէնքներուն համաձայն, իւրաքանչիւր խումբի խաղացողներուն թիւը վեցի փոխարէն եղաւ հինգ եւ մարզիկները ձերբազատեցան դաշտին վրայ 2 տարբեր բաժիններու մէջ խաղալու բարդութենէն: Աւելի ուշ, 1976ին աղջիկներու պասքեթպոլը մուտք գործեց նաեւ Ողիմպիական խաղերու ծիրէն ներս:

## «ԷՆ. ՊԻ. ՍԻ» ԵՒ «ԷՆ. ՍԻ. ԷՅ. ԷՅ.»

1905ին համալսարանները միասնաբար յառաջ բերին օրէնսդիր յանձնախումբ մը, եւ այսպիսով կազմուեցաւ Նէյսմիթի օրէնքներէն անկախ նոր օրէնքներու շարք մը: Այս ընթացքը սակայն շարունակուեցաւ եւ մինչեւ 1913 այս օրէնքներուն վրայ արդէն իսկ եկած էին աւելնալու 3 այլ օրէնքներու շարքեր (զինուորական եւ երկու այլ արհեստավարժներու օրէնքներ), ինչ որ մեծ շփոթ կը ստեղծէր մրցումներուն ընթացքին: Բարեբախտաբար, սակայն, 1915ին այս շփոթ մթնոլորտէն ձերբազատելու համար համալսարաններն ու Ուայ-էմ.Սի.էյ.-ը միասնաբար կազմեցին օրէնսդիր նոր յանձնախումբ մը, որ աւելի ուշ՝ 1936ին կոչուեցաւ ԷՆ. ՊԻ. ՍԻ. (Ազգային Պասքեթպոլի Յանձնախումբ), եւ որ մինչեւ 1979 թուական գործեց իբրեւ մարզախաղին օրէնսդիր միակ յանձնախումբը: Սակայն 1979ին համալսարանները դարձեալ բաժնուեցան եւ նոյն տարին ալ անոնց օրինակին հետեւեցան դպրոցները: Այսպիսով, կազմուեցաւ «ԷՆ. ՍԻ. էյ. էյ.»-ը, որ 12 հոգիներու յանձնախումբով մը մինչեւ օրս կը տնօրինէ համալսարաններու, դպրոցներու, զինուորականներու, ինչպէս նաեւ աղջիկներու պասքեթպոլը:

Այսպէս, ԷՆ. ՍԻ. էյ. էյ.-ի ծագումով 1930ական թուականներուն ստեղծուեցան կարգ մը նոր միջոցառումներ, որոնց նպատակն էր աւելի եւս հետաքրքրական դարձնել պասքեթպոլը: Այս շրջանին էր, որ վաւերացուեցան բրի-սեքընտի, կոլ-թեյնիսի եւ շաք-քլաքի (այն ժամանակը, որուն ընթացքին խումբ մը պէտք է գնդակը նետէ) նման կարեւոր միջոցառումներ, որոնց նպատակն էր որոշ չափով լուսարձակները հեռացնել հասակով երկար մարզիկներէն եւ խաղը դարձնել աւելի արագ: Այս նոյն շրջանին էր, որ մէջտեղ եկան գոն-տի-ֆեյս, մեկ-թու-մեկ տիֆեյս եւ փրէշըր-տիֆեյս թեքնիք միջոցառումները եւ վերը նշուած օրէնքներուն հետ միասին եկան լուսարձակները ուղղելու, ո՛չ թէ միայն հասակաւոր, այլ նաեւ արագ եւ ճարպիկ մարզիկներուն վրայ:

# ՄԱՐԶԱԿԱՆ ԿԱՅՔԵՐ ՀԱՄԱՅԱՆՅԻՆ ՎՐԱՅ



Համացանցը գոհացում կու տայ բոլոր մարզասէրներուն, առանց խտրականութիւն դնելու այս կամ այն մարզաձեւին միջեւ: Մարզական լուրեր տրամադրող կայքերու կողքին, «մասնագիտացած» կայքեր հանրութեան տրամադրութեան տակ կը դնեն տուեալ մարզաձեւի մը կամ մարզական աշխարհի մէկ բնագաւառին մասին մանրամասն տեղեկութիւններ: Այսպէս, օրինակ, մինչ ֆութպոլի սիրահարները կ'ըմբռնեն [www.football365.com](http://www.football365.com)-ը, աթլետիկայի համակիրները կրնան իրենց սիրած մարզաձեւին մասին

մանրամասն լրատուութիւններ, ինչպէս նաեւ մասնագիտական ցուցմունքներ ստանալ այցելելով [www.trackandfieldnew.com](http://www.trackandfieldnew.com) կամ [www.runnersworld.com](http://www.runnersworld.com) հասցէով կայքերը:

Սուսերամարտով հետաքրքրուողները կրնան ուղղուել դէպի [www.fencing.net](http://www.fencing.net) հասցէով կայքը, որ լրատուութիւններու կողքին լաւապէս կը ներկայացնէ սուսերամարտի մարզաձեւը, ուր օգտագործուած բառապաշարը, ինչպէս նաեւ թեքնիք ցուցմունքներ կը փոխանցէ մարզաձեւը կիրարկողներուն:

[www.harlemglobetrotters.com](http://www.harlemglobetrotters.com). Հասցէով կայքը ժամադրովայն է աշխարհահռչակ Հարլէմ Կլոպթրոթըրզ պասթեթպոլի խումբին սիրահարներուն: Այստեղ կարելի է գտնել սպառիչ տեղեկութիւններ ցուցադրական խաղարկութեամբ տարիներէ ի վեր լուսարձակները իրենց վրայ կեդրոնացած այս խումբին մասին:

Մարզական գիտութիւններով հետաքրքրուողները նոյնպէս իրենց բաժինը ունին համացանցին վրայ: Տարբեր մարզաձեւերու մէջ կատարուած շարժումներու գիտական ուսումնասիրութիւնը, զննակի մը ուղղութիւն փոխելու բնագիտական բացատրութիւնը եւ շարք մը այլ գիտական եւ մասնագիտական նիւթեր արծարծուած են [www.exploratorium.edu/sports/index.html](http://www.exploratorium.edu/sports/index.html) հասցէով համացանցի կայքին մէջ:



## ԶՈՒՏ ԱՄԵՐԻԿԵԱՆ...

Շարունակուած՝ 6րդ էջէն

Առ այդ, ձորձ Միքընի, Պոպ Բըրթլընտի, Պիլ Ռասըլի, Ուիլ Զէմպըրլէյնի եւ Քարիմ Ապտիլ - Ժապպարի նման հասակաւոր, եւ հսկայ մարզիկներուն կողքին, եկան փայլելու Պոպ Բուզգիի, Ֆիլ Ֆորտի, Այզա Թոմասի եւ Ըրոուին Ճոնսոնի նման միջահասակ, բայց արագ մարզիկներ, որոնք դարձան ոչ միայն սքորըրներ այլ նաեւ՝ վիլէյմէյքըրներ, որոնք կերտեցին իրենց խումբերուն յաղթանակները:

Այս շրջանին էն. Սի. էյ. էյ.ը հետզհետէ սկսաւ աւելի յաջողութիւն գտնել: Այսպէս, 1939ին անոր կազմակերպած մրցաշարքին, մասնակցեցան միայն 8 խումբեր, մինչ աւելի ուշ, 1963ին մասնակցող խումբերուն թիւը հասաւ 25ի, իսկ 1974ին՝ 64ի: Այսպէս, անոր կազմակերպած մրցաշարքերուն ընթացքին եկան փայլելու շատ մը աստղեր, իսկ ամէնէն աւելի տիրապետող խումբը հանդիսացաւ ԵՈՒ. Սի. էյ. էյ.ը, որ 12 տարուան ընթացքին 10 անգամ շահեցաւ մրցաշարքին բաժակը:

### ԱՐՀԵՍՏԱՎԱՐԺ ՊԱՍՔԵԹՊՈՒ

Իսկ ինչ կը վերաբերի արհեստավարժ պասթեթպոլին, անոր առաջին եւ ամէնէն հռչակաւոր խումբերը եղած են Պաֆլըօ Ճըրմըն, Հարլէմ Կլոպթրոթըրզ, Օրիճիւնը Սելթիքս եւ Ռէնէսանս Պիկ - Ֆայվ խումբերը, որոնք Նէթ Հոլմընի, Չարլզ «Թարգան» Քուլըրի եւ Ռիս «Կուզ» Թէյթըմի նման աստղերու միջոցով տարիներ շարունակ տիրապետած են այս մարզին:

Արհեստավարժ պասթեթպոլի լիկաները առաջին անգամ երկչոտ քայլերով սկսած են 1898ին, երբ կազմուած է Ազգային Պասթեթպոլի Լիկան (էն. Պի. էյ.), որ սակայն տնտեսական պատճառներով դադրած է գործելէ քանի մը տարի ետք: Առ այդ, արհեստավարժ պասթեթպոլը մնացած է այս պաղ միջնորդութի մէջ, մասնաւոր՝ Ա. Աշխարհամարտի շրջանին, սակայն 1938ին կազմուած է նոր էն. Պի. էյ. մը, որուն վրայ եկած է աւելնալու այլ միութիւն մը՝ Ամերիկայի Պասթեթպոլի Միութիւնը (1946ին՝ Պի. էյ. էյ.): Այսպէս երկու տարուան սուր պայքարէ ետք, այս երկուքը վերջապէս միացած են եւ 1949ին կազմուած է արդի էն. Պի. էյ.ը (Ազգային Պասթեթպոլի Միութիւնը), որ մինչեւ օրս կը շարունակէ տնօրինել աշխարհի տարածքին ամէնէն աւելի բարձր մակարդակ ունեցող Միացեալ Նահանգներու ախոյեան

նութիւնը: 1967ին սկսած է նաեւ այլ լիկա մը՝ էյ. Պի. էյ.ը, որ 9 տարի շարունակ պայքարելէ ետք, լուծուած է 1976ին եւ անոր խումբերէն քանի մը հատը անցած են էն. Պի. էյ.:

էն. Պի. էյ.ի ծագումէն քանի մը տարիներ ետք մէջտեղ եկաւ շատ կարեւոր օրէնք մը, որուն համաձայն, իւրաքանչիւր եղանակի աւարտին էն. Պի. էյ.ի խումբերը իրաւունք կ'ունենային իրենց նախասիրած համալսարանական մարզիկները գատելու եւ զանոնք իրենց խումբին միացնելու: Այս գործողութեան ընթացքին նախապատուութիւնը կը տրուէր բաղդատաբար աւելի տկար խումբերուն, որպէսզի անոնք առիթը ունենան զօրանալու եւ աւելի զօրաւոր խումբերուն հետ մրցելու: Այս օրէնքը մինչեւ օրս կը գործադրուի եւ այս ձեւով է, որ էն. Պի. էյ.ը կը շարունակէ մնալ ամէնէն տիկամիք եւ հետաքրքրական պասթեթպոլի միջավայրը:


1980ականներուն սկսաւ պասթեթպոլի հռչակին վերելքը, մասնաւոր՝ երբ հեռատեսիլի կայանները սկսան ուղղակիօրէն սփռել էն. Սի. էյ. էյ.ի եւ էն. Պի. էյ.ի խաղերը: Այս շրջանին է, որ սկսան փայլիլ Մէքիք Ճոնսոնի, Մայքըլ Ճորտընի եւ Լէրի Պըրտի նման «կուռքեր», որոնք իրենց բացառիկ տաղանդին շնորհիւ տարիներ շարունակ հմայեցին պասթեթպոլի սիրահարները:

Ներկայիս պասթեթպոլը արդէն իսկ միջազգայնացած է, եւ Եւրոպան սկսած է բաւական մեծ գլխացաւ պատճառել էն. Պի. էյ.ի աստղերուն: Երկուսուլաւիոյ կատարած վերջին իրագործումը արդէն իսկ լաւագոյն փաստն է, որ եւրոպացիք Տիվաչի, Սթոյսքովիչի, Նովիթզքիի եւ այլ աստղերու միջոցով սկսած են խաղին գաղտնիքները լաւապէս ընկալել եւ ապագայի համար շատ մեծ վտանգ սպառնալ Ռէնի Միլըրին, Քոպի Պրայընթին, էլըն Այվըրսընին, Շաքիլ Օնիլին, Ճէյսըն Քիտին եւ միւս հսկաներուն:

Արդեօք Եւրոպա պիտի յաջողի՞ աւելիով ինքզինք փաստել ամերիկեան այս մարզախաղին մէջ, ինչպէս Ամերիկան փաստեց եւրոպական ֆութպոլին մէջ...:

Շուտով յայտնի կ'ըլլայ ամէն բան...

ՆԱՐԻՆԷ ՊՈՒԼՂՈՒՐՃԵԱՆ



ՊԱՍԵԹՊՈԼ

# ՃՈՐՏԸՆ ԿԸ ՎԵՐԱԴԱՌՆԱՅ

Անցեալ շաբաթավերջին, պասքեթպոլի բոլոր ժամանակներու ամէնէն փայլուն աստղերէն Մայքըլ Ճորտըն յայտարարեց, թէ պատրաստ է էն. Պի. էյ. էն ներս իր 15րդ տարեշրջանը սկսելու Ուաշինկթըն Ուիզըրտզի կազմէն ներս, որուն հետ երկու տարուան համաձայնագիր մը կնքած էր 2000ին:

Ճորտըն, որ յառաջիկայ Փետրուարին 40 տարեկան պիտի ըլլայ, այս մասին ըսաւ. «Անհամբեր կը սպասեմ այս տարեշրջանին պասքեթպոլ խաղալ, որոշումիս դրդապատճառը խաղին հանդէպ ունեցած սէրս է: Ֆիզիքապէս կը զգամ թէ զօրաւոր եմ եւ կը կարծեմ, թէ նախորդ երկու տարեշրջաններուն թափած ճիգերուս իբրեւ արդիւնք՝ մարզական լաւ վիճակի մէջ եմ»:

էն. Պի. էյ. էն նախօրեակին, Ուիզըրտզի մարզիչը այս շաբաթ պիտի փորձէ Ճորտընը: Հակառակ անոր հաւաստիացումներուն, թէ ինք կրնայ իւրաքանչիւր մրցումի 30էն 35 վայրկեան դաշտ ներկայանալ, կը նախատեսուի որ մարզիչ Ռոկ Գոլիցն Ճորտընը նկատի առնէ իբրեւ պահեստի գլխաւոր մարզիկ:

Նշենք, որ Ճորտըն 1999ին հեռացած էր պասքեթպոլի աշխարհէն, 13 տարի Շիքագօ Պուլզի թիւ 23 եւ 45 շապիկները կրելէ ետք: Այս ընթացքին ան 6 անգամ իր կազմը առաջնորդած էր էն. Պի. էյ. էնի ախոյեանութեան տիտղոսին, 5 անգամ՝ «լաւագոյն մարզիկ»ի եւ 10 անգամ «լաւագոյն սքորլըր»ի տիտղոսներուն արժանանալով: Ճորտըն երկու անգամ մաս կազմած է Ողիմպիականի ոսկի մետալ շահող ամերիկեան հաւաքականներուն (1984, 1992):

ԱՅԼԵԹԻՉՍ

## ՄԱՐԻՈՆ ԾՈՆՉ ՏԱՐԵՇՐՉԱՆԸ ԱՒԱՐՏԵՑ ԱՌԱՆՑ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ

Երեք անգամ Ողիմպիական խաղերու ոսկի մետալակիր, «աշխարհի ամէնէն արագ կինը»՝ ամերիկացի Մարիոն Ճոնզ տարեշրջանը աւարտեց առանց պարտութեան:



Աթլետիկայի աշխարհի ախոյեանութեան վերջին մրցումներուն, 100 մետր վազքին, թաց գետնի վրայ մրցումը սխալ սկսելով հանդերձ, ան մրցումը աւարտեց Ա. դիրքի վրայ:

Ճոնզ արձանագրեց իր 14րդ յաջորդական յաղթանակը եւ ընդհանուր 17րդ յաղթանակը, անցեալ տարուան ախոյեանութեան մրցումներուն անակնկալ պարտութիւն մը կրելէ ետք ութրանացի Զանա Փինթուսելիչէն:

Արհեստավարժ մարզիկ դառնալէն ի վեր առաջին տարեշրջանն է, որ Ճոնզ առանց պարտութեան կ'աւարտէ:

Ճոնզ 1 ամիս արձակուրդ պիտի առնէ, որմէ ետք պիտի պատրաստուի յառաջիկայ տարեշրջանին համար: Ան իր արձակուրդը պիտի անցընէ իր ընկերոջ՝ «աշխարհի ամէնէն արագ մարդ»ուն՝ Թիմ Մոնթկոմըրիի հետ, որ անցեալ շաբաթ Փարիզի մէջ 100 մետր վազքի նոր մրցանիշ մը հաստատեց՝ 9՝ 78:

Լրագրողները զանոնք կոչած են «աշխարհի ամէնէն արագ գոյգը»...

